ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-57/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.09.2015թ. թիվ 1/73-1/238000-15, 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00053663) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 01.07.2015թ.

թիվ 0111112315 գրության և 12.02.2016թ. ներկայացված փաստաթղթերի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 19.08.2015թ. թիվ 09/2096 գրության հիման վրա, 01.09.2015թ. թիվ 1/73-1/238000-15, 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 30.06.2016թ. թիվ 01/04.2/2535-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է 7-րդ չափաբաժնի մասով՝ տեխնիկական բնութագիրը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված, որի արդյունքնում «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 02.06.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 գրությամբ ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ դատական դեպարտամենտի 07.07.2016թ. թիվ Դ-1Ե-4377 գրության համաձայն՝ վերջինիս կողմից կազմակերպված գնման ընթացակարգերին «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել 07.07.2015թ., 09.09.2015թ., 02.04.2016թ., 12.05.2016թ. և ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, հայտնել է, որ անհրաժեշտ

է նախաձեռնել «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 08.09.2015թ. թիվ 01/04.1/2353-15 և 24.02.2016թ. թիվ 01/04.2/660-16 գրություններով դիմել է «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին և առաջարկել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 122.1-րդ կետի համաձայն՝ Կենտրոնի ծանուցումն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել ներկայացված նյութերի վերաբերյալ կարծիք և (կամ) հիմնավորող փաստաթղթեր:

Ի պատասխան Կենտրոնի 08.09.2015թ. թիվ 01/04.1/2353-15 գրության, «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն 12.10.2015թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 2015թ. հուլիսի 29-ին կայացած թիվ «ԾՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգին ներկայացրել է գնման հայտ և հայտի թիվ 4.1 հավելվածում տվել է հայտարարություն առաջարկող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ հայտարարություն և անցնելով ընթացակարգի երկրորդ փուլ՝ ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր: Ընկերությունը, գործելով օրենքի սահմաններում, ներկայացրել է 8-րդ և 22-րդ չափաբաժինների համար ***համարժեք*** ապրանքների տեխնիկական բնութագրերը, որը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ԾՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դիտարկել է ***ոչ համարժեք:***

Ի պատասխան Կենտրոնի 24.02.2016թ. թիվ 01/04.2/660-16 գրության՝ Ընկերությունը 02.03.2016թ. գրությամբ ներկայացրել է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի և «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի միջև կնքված 2015թ. հունիսի 6-ի թիվ ԴԹԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-3

պայմանագրի պատճենը, ինչպես նաև հարկային հաշվի և թիվ 1 արձանագրության պատճենները, որոնք փասում են պայմանագրի պատշաճ կատարման մասին:

«Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի տնօրենը ներկայացրել է Ընկերությանը ցուցակում ներառելու վերաբերյալ առարկություններ՝ մասնավորապես, հայտնել է, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պատշաճ ձևով չի ստացել և նույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ և 52-րդ կետերի պահանջները, այն է՝ չի առաջարկել ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունները:

«Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն նաև ներկայացրել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի թիվ «ԾՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ Ընկերության կողմից ձեռքբերված ապացույցներ, մասնավորապես՝ ներկայացվել է HP Europe B.V. ընկերության տեղեկատվական նամակի բնօրինակը և հայերեն լեզվով նոտարական վավերացմամբ թարկմանությունը, այն մասին, որ DICOM (Digital Imaging and Communications in Medicine)-ը արդյունաբերական ստանդարտ է համակարգիչների միջև ռադիոլոգիական պատկերների և այլ բժշկական տեղեկատվության հաղորդման համար:

Պահանջագրում նշված դիսպլեյների տեխնիկական բնութագրերի դեպքում հատկապես DICOM greyscale standart compatible preset for clinical revieq applications ստանդարտին համապատասխանումը ենթադրում է բժշկական սարքավորմամբ ստացվող պատկերների վրա մոխրագույն երանգները պատկերելու առավել լայն հնարավորություններ:

HP Z Z27i մոդելը դասվում է պրոֆեսիոնալ մոնիտորների գծին, և ինչպես Fujitsu 27 P 27T-7, օժտված է 2560 x 1440 բարձր թույլատրելիությամբ և 0,233 չափսի պիքսելով հնարավորություն է տալիսհասնել պատկերների բարձր դետալիգացիայի բոլոր անհրաժեշտ ինչպես անալոգային, այնպես էլ թվային միակցիչների առկայությամբ, իսկ Black Stretch ինտեգրացված տեխնոլոգիան թույլ է տալիս բարձրացնել մութ շրջանների մոխրագույն երանգների և կիսաերանգների ցուցադրման որակը եկրանի վրա, որը թույլ է

տալիս միացնել այդ բժշկական սարքավորումները և այդ իսկ պատճառով HP Europe B.V. ընկերությունը կարծում է, որ HP Z Z27i մոնիտորը կարող էր ամբողջությամբ բավարարել պատվիրատուի պահանջներին: Ամեն դեպքում, տվյալ ստանդարտի դասակարգման մեջ հիշատակության բացակայությունը չի կարող մեկնաբանվի որպես ցածր որակի հատկանիշ, առավել ևս, եթե եզրակացության մեջ նշված չէ անհամապատասխանության աստիճանը:

Նույն տեսակետը Ընկերությունը հայտնել է նաև 21.11.2016թ. և 20.01.2017թ. գրություններով:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 19.08.2015թ. թիվ 09/2096 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել Պատվիրատուի դիրքորոշումը Ընկերության կողմից «ՇՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի 8-րդ և 22-րդ չափաբաժիններով հրավերի տեխնի-կական բնութագրին անհամապատասխան հայտ ներկայացնելու վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով պատշաճ ծանուցված լինելով 21.11.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-57/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 24.03.2016թ. թիվ 01/04.2/1157-16 գրությամբ դիմել է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի և առաջարկել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 122.3-րդ կետի համաձայն՝ Կենտրոնի ծանուցումն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային

օրվա ընթացքում տրամադրել ներկայացված նյութերի վերաբերյալ կարծիք և (կամ) հիմնավորող փաստաթղթեր:

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության, 30.03.2016թ. թիվ 0111050916 գրությամբ հայտնել է, որ համաձայն է Ընկերության 02.03.2016թ. գրությամբ նշված ամբողջ բովանդակության հետ, ընկերությունը հարկային պարտավորություն չի ունեցել, պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել է պատշաճ որակով և ժամանակին:

Կենտրոնը 12.04.2016թ. թիվ 01/04.2/1459-16 գրությամբ կրկին դիմել է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և հայտնել է, որ «ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հունիսի 10-ի թիվ 4 արձանագրությամբ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հայտը մերժվել է՝ տեխնիկական բնութագիրը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված և «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ գնման ընթացակարգով որևէ խախտում չի արձանագրվել՝ խնդրելով ներկայացնել դիրքորոշում, սակայն որևէ պատասխան չի ստացել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով պատշաճ ծանուցված լինելով 21.11.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-57/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-57/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 01.09.2015թ. թիվ 1/73-1/238000-15, 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով ընթացակարգ

1. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի 7-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկան է Canon CanoScan LiDE 210, սեղանի սկաներ, սկանավորման արագությունը 5-7 էջ/ր, 4800 dpi, կամ համարժեք ապրանքատեսակ:

3. Ընթացակարգին «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4.1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող թիվ 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 39-43-րդ և 45-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2015թ. թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ և 42-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից և առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2015թ. թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է 7-րդ չափաբաժնի մասով՝ տեխնիկական բնութագիրը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված, մասնավորապես, Ընկերության կողմից առաջարկվել է սկաներ, որը ստորև ներկայացված չափանիշներով չի

համապատասխանում որպես հիմնական համեմատական ներկայացված սկաների Canon LIDE 210 տեխնիկական բնութագրին.

անհամապատասխան բնութագրեր	Canon LIDE 210	առաջարկվող սկաների բնութագրեր
Սկանավորման կետայնությունը	4800x4800dpi	2400x4800 dpi
1 էջ սկանավորման արագությունը	10 վարկյան	16 վայրկյան

6. Կենտրոնը 30.06.2016թ. թիվ 01/04.2/2535-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2016թ. թիվ 1/73-1/6200-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից «ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 02.06.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2016թ. թիվ 1/73-1/6200-15 գրությամբ ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ դատական դեպարտամենտի 07.07.2016թ. թիվ Դ-1Ե-4377 գրության համաձայն՝ վերջինիս կողմից կազմակերպված գնման ընթացակարգերին «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել 07.07.2015թ., 09.09.2015թ., 02.04.2016թ., 12.05.2016թ. և ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՇՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի 8-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկան է հանդիսացել համակարգչային մոնիտոր՝ Fujitsu P27T 7 LED կամ համարժեք ասպրանքատեսակ, իսկ 22-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել սնուցման համակարգ՝ APC Smart-UPS 1500VA կամ համարժեք ապրանքատեսակ:

3. Ընթացակարգին «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4.1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող թիվ 8-րդ և 22-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

4. «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն 03.08.2015թ. թիվ 5 հավելվածով ներկայացրել է Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2015թ. կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի 8-րդ և 22-րդ չափաբաժինների համար ներկայացված առաջարկները դիտարկվել են ոչ համապատասխան /ոչ համարժեք/, ինչով պայմանավորված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը մերժել:

6. «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն 20.01.2017թ. Կենտրոնին է ներկայացրել HP Europe B.V. ընկերության տեղեկատվական նամակի բնօրինակը՝ հայերեն լեզվով նոտարական վավերացմամբ թարգմանությունը:

7. «HP Europe B.V.» ընկերության տեղեկատվական նամակի համաձայն Ընկերության կողմից առաջարկվող ապրանքները համարժեք են տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներին:

6. ՍՑ-ԳԲԽ-57/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 01.07.2015թ. թիվ 0111112315 գրությունը և 12.02.2016թ. գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 19.08.2015թ. թիվ 09/2096 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի 12.10.2015թ., 02.03.2016թ., 21.11.2016թ. և 20.01.2017թ. գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետրյալը.

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով ընթացակարգ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 35-րդ կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտանբերված անհամապատասխանությունները:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերին ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաեւ սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ ***առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

- շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակիցը.

- չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթերի ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգին «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4.1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող թիվ 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 39-43-րդ և 45-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2015թ. թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ և 42-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից և առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2015թ. թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման 7-րդ չափաբաժնի մասով՝ տեխնիկական բնութագիրը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված, մասնավորապես, Ընկերության կողմից առաջարկվել է սկաներ, որը ստորև ներկայացված չափանիշներով չի համապատասխանում որպես հիմնական համեմատական ներկայացված սկաների Canon LIDE 210 տեխնիկական բնութագրին.

անհամապատասխան բնութագրեր	Canon LIDE 210	առաջարկվող սկաների բնութագրեր
Սկանավորման կետայնությունը	4800x4800dpi	2400x4800 dpi
1 էջ սկանավորման արագությունը	10 վարկյան	16 վայրկյան

Կենտրոնը, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերը նշված արձանագրությունները, գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 51-րդ և 52-րդ կետերի պահանջները, քանի որ նախ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո, տեխնիկական բնութագիրը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված, մերժել է վերջինիս հայտը՝ առանց «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու հնարավորություն տալու:

Ելնելով վերոհիշյալ իրավական և փաստական հանգամանքներից՝ Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի 8-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկան է հանդիսացել համակարգչային մոնիտոր՝ Fujitsu P27T 7 LED կամ համարժեք ասպրանքատեսակ, իսկ 22-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել սնուցման համակարգ՝ APC Smart-UPS 1500VA կամ համարժեք ապրանքատեսակ:

Ընթացակարգին «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4.1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող թիվ 8-րդ և 22-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

«Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն 03.08.2015թ. թիվ 5 հավելվածով ներկայացրել է Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2015թ. կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի 8-րդ և 22-րդ չափաբաժինների համար ներկայացված առաջարկները դիտարկվել են ոչ համապատասխան /ոչ

համարժեք/, ինչով պայմանավորված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը մերժել:

Սակայն, Կենտրոնին ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների արտադրող ընկերության՝ «HP Europe B.V.» ընկերության տեղեկատվական նամակի համաձայն՝ «DICOM (Digital Imaging and Communications in Medicine)-ը արդյունաբերական ստանդարտ է համակարգիչների միջև ռադիոլոգիական պատկերների և այլ բժշկական տեղեկատվության հաղորդման համար:

Պահանջագրում նշված դիսպլեյների տեխնիկական բնութագրերի դեպքում հատկապես DICOM greyscale standart compatible preset for clinical revieq applications ստանդարտին համապատասխանումը ենթադրում է բժշկական սարքավորմամբ ստացվող պատկերների վրա մոխրագույն երանգները պատկերելու առավել լայն հնարավորություններ:

HP Z Z27i մոդելը դասվում է պրոֆեսիոնալ մոնիտորների գծին և ինչպես Fujitsu 27 P 27T-7 օժտված է 2560 x 1440 բարձր թույլատրելիությամբ և 0,233 չափսի պիքսելով հնարավորություն է տալիսհասնել պատկերների բարձր դետալիգացիայի բոլոր անհրաժեշտ ինչպես անալոգային, այնպես էլ թվային միակցիչների առկայությամբ, իսկ Black Stretch ինտեգրացված տեխնոլոգիան թույլ է տալիս բարձրացնել մութ շրջանների մոխրագույն երանգների և կիսաերանգների ցուցադրման որակը եկրանի վրա, որը թույլ է տալիս միացնել այդ բժշկական սարքավորումները և այդ իսկ պատճառով HP Europe B.V. ընկերությունը կարծում է, որ HP Z Z27i մոնիտորը կարող էր ամբողջությամբ բավարարել պատվիրատուի պահանջներին: Ամեն դեպքում, տվյալ ստանդարտի դասակարգման մեջ հիշատակության բացակայությունը չի կարող մեկնաբանվի որպես ցածր որակի հատկանիշ, առավել ևս, եթե եզրակացության մեջ նշված չէ անհամապատասխանության աստիճանը:

«ՇՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուն նախատեսել է համակարգչային մոնիտոր Fujitsu P27T 7 LED կամ համարժեք, իսկ 22-րդ չափաբաժնի մասով՝ սնուցման համակարգ՝ APC Smart-UPS 1500VA կամ համարժեք ապրանքատեսակներ:

Ուսումնասիրելով ներկայացված փաստերը, այդ թվում նաև HP Europe B.V. ընկերության տեղեկատվական նամակը՝ Կենտրոնը գտնում է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն

թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ, ըստ Europe B.V. ընկերության, «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից «ՇՀԱՊՁԲ-15?8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացված HP Z Z27i մոնիտորը կարող էր ամբողջությամբ բավարարել պատվիրատուի պահանջներին, իսկ տվյալ ստանդարտի դասակարգման մեջ հիշատակության բացակայությունը չի կարող մեկնաբանվի որպես ցածր որակի հատկանիշ, առավել ևս, եթե եզրակացության մեջ նշված չէ անհամապատասխանության աստիճանը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուի կողմից չի պատճառաբանվել, թե կոնկրետ ինչ անհամապատասխանություն է առկա առաջարկվող տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքների հատկանիշների (որակական և տեխնիկական) միջև:

Կենտրոնը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ գնման առարկա հանդիսացող ապրանքների որակական և տեխնիկական չափանիշները, առաջարկվող ապրանքների համարժեքությունը կամ անհամապատասխանությունը պարզելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ:

Ի տարբերություն «ՇՀԱՊՁԲ-15/8-2 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմանը՝ Ընկերության կողմից Կենտրոնին է ներկայացվել HP Europe B.V. ընկերության տեղեկատվական նամակը:

Կենտրոնը հարկ է համարում նշել, որ «HP Europe B.V.» ընկերությունը հանդիսանում է գնման առարկա հանդիսացող ապրանքների արտադրող և վերջինս հայտնում է, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքները համարժեք են տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներին:

Ներկայացված նամակի վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից որևէ դիրքորոշում, առարկություններ, այդ թվում նաև գրավոր ապացույցներ չի ներկայացվել, որով կհերքվեր մասնակցի կողմից ներկայացված նամակի իրականության անհամապատասխանությունը:

Նման պայմաններում Կենտրոնը արձանագրում է, որ մասնակցի կողմից թույլ չի տրվել գնման ընթացակարգը կարգավորող որևէ օրենսդրական խախտում:

Ելնելով վերոհիշյալ իրավական և փաստական հանգամանքներից և նկատի ունենալով, որ չի հաստատվել Ընկերության կողմից կեղծ տվյալի ներկայացման փաստը, Կենտրոնը գտնում է, որ 01.09.2015թ. թիվ 1/73-1/238000-15 գրությամբ ներկայացված

«Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 01.09.2015թ. թիվ 1/73-1/238000-15, 22.02.2016թ. թիվ 1/73-1/6200-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ, ՍՑ-ԳԲԽ-57/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան